Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 94 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻՆ ԳՈՒՅՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

1.	Ծրագրի նպատակը	Նպաստել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի, Արթիկ, Մարալիկ քաղաքների 5 դպրոցների և 5 մանկապարտեզների շուրջ 3000 երեխաների ուսման և զարգացման համար բարենպաստ միջավայրի ստեղծմանը, գույքի տրամադրման միջոցով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի դեսպանություն (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաբայան 23/4)
4.	Ծրագիրը կատարողը	«Դպրոցական ծնողխորհուրդների անդամների ազգային ասոցիացիա» հասարակական կազմակերպություն (հարկ վճարողի հաշվեհամար՝ 01005784, հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Դավիթ Անհաղթի 10)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի քաղաք Գյումրի, քաղաք Արթիկ, քաղաք Մարալիկ, բնագավառը՝ կրթական
6.	Ծրագրի բյուջեն	38,515,000 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի 5 դպրոցներ և 5 մանկապարտեզներ • «Գյումրու N 8 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն (քաղաք Գյումրի, Լիսինյան 6, հարկ վճարողի հաշվեհամար՝ 05511356) • «Գյումրու թիվ 11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն (քաղաք Գյումրի, Արամ Խաչատյան 27, հարկ վճարողի հաշվեհամար՝ 05511287)

		• «Գյումրու Հ. 29 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն (քաղաք Գյումրի, Մանուշյան 7, հարկ վճարողի հաշվեհամար՝ 05511071) • «Մարալիկի թիվ 2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն (քաղաք Մարալիկ, Կոլտնտեսականների 2, հարկ վճարողի հաշվեհամար՝ 06106992) • «Արթիկի Հ. 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն (քաղաք Արթիկ, Թումանյան 34, հարկ վճարողի հաշվեհամար՝ 05529635) • Գյումրի համայնքի «Երազանք մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (քաղաք Գյումրի, Լիսինյան 17, հարկ վճարողի հաշվեհամար ՝ 05539886) • Գյումրի համայնքի «Ծիածան-մսուր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (քաղաք Գյումրի, Ղուկասյան 169/6, հարկ վճարողի հաշվեհամար՝ 05539268) • Գյումրի համայնքի «Լիանա-մսուր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (քաղաք Գյումրի, Շիրակացի 127, հարկ վճարողի հաշվեհամար՝ 05539843) • Գյումրի համայնքի «Հուսո Առագաստ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (քաղաք Գյումրի, Արամ Խաչատրյան26, հարկ վճարողի հաշվեհամար՝ 05537022) • «Արթիկի թիվ 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (քաղաք Արթիկ, Անկախության 20/1, հարկ վճարողի հաշվեհամար՝ 06103789) Դպրոցների և մանկապարտեզների ընտրության հարցում հաշվի է առնվել հետևյալը՝ դպրոցի/մանկապարտեզի երեխաների քանակը, գույքի վիճակը, վերջին անգամ երբ են գույք ստացել:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի փետրվարի 13-ից մինչև 2023 թվականի հոկտեմբերի 12-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում գտնվող 5 դպրոցների և 5 մանկապարտեզների համար կահավորանքի ձեռքբերման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 37,815,000 դրամ,

		նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվաի 13-ից մինչև 2023 թվականի հոկտեմբերի 12-ը: 2. Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 700,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվաի 13-ից մինչև 2023 թվականի հոկտեմբերի 12-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Դպրոցական զույքի՝ 630 սեղանի և 1260 աթոռի ձեռքբերում և տեղադրում՝ 31,437,000 դրամ (չեն ակնկալվում հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների վճարումից ազատում): 2. Մանկապարտեզների համար զույքի՝ 25 սեղանի, 100 աթոռի, 25 պահարանի, 45 եռահարկ մահճակալի և 135 մահճակալի ներքնակի) ձեռքբերում և տեղադրում՝ 6,378,000 դրամ (չեն ակնկալվում հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների վճարումից ազատում): 3. Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 700,000 դրամ (ակնկալվում է հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների վճարումից ազատում):
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 700,000 դրամ
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանում Ճապոնիայի դեսպանության վերահսկողություն, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղե-կություններ լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

09.02.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ